ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ << ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՄԱՐՏԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ

<< 03 >> << 11 >> 2023 թ.

ՀՀ Արմավիրի մարզի
գլխավոր քարտուղար
պարոն Արամ Հովհաննիսյանին

Մեծարգո՛ պարոն Հովհաննիսյանին

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Երասխահունի Մ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հայտարարվում է մաթեմատիկայի (9 ժամ), ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ:

Առդիր 1 էջ

Դպրոցի տնօրեն՝ Կ. Մանուկյան

0924 գ. Երասխահուն, փողոց 1, շենք 21, Հեռ. 098-220-937 , էլ. փոստ yeraskhahun@schools.am

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Արմավիրի մարզի <<Երասխահունի Մ. Գևորգյանի անվ. միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի 9 (ինը) դասաժամ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

_Դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

-Անձը հաստատող փաստաթուղթ,

<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-Ինքնակենսագրություն (Ձև 5)

-Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում)

_Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակը վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 14 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 17-ին՝ ժամը 14:00-ին «Երասխահունի Մ. Գևորգյանի անվ. միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Արմավիրի մարզ, գ. Երասխահուն փ. 1, շենք 21 հեռ. 098-220-037

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098-220-037 հեռախոսահամարով: